

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՐԱԳԱՐԱՆ

Մ ո ս կ վ ա 1892.

«Արարատ»-ի խմբագրութիւնը շնորհակալութեամբ ստացաւ վերոյիշեալ հրատարակութեան առաջին գիրքը: Միաբանը Փարիզից առանձին մի յօդւածով «Մշակի» մէջ նորոգել էր մի կարևոր խնդիր, որ վաղուց ի վեր շատ շատերի ամենամեծ ցանկութիւնն է եղել, այն է՝ ունենալ մի ազգային ամեն կողմից լիակատար մատենագարան բոլոր հայալեզու հրատարակութեանց և օտար լեզուներով այն գրքերի որոնք մի որ և է կերպով իրանց բովանդակութեամբ շոշափում են հայութեան հետաքրքիր խնդիրներ: Այդ տեսակ հիմնարկութեան համար իբրև տեղ ամենայն իրաւամբ Ս. Ելմիածինն էր համարել և պարզել Մայր Աթոռի շատ և շատ տեսակէտներից ունեցած յարմարութիւնը: Նրանցից իբրև գլխաւոր հիմունք այն էր յարմարում, որ ս. Ելմիածնի անունը այնքան նուիրական, այնքան սիրելի է իւրաքանչիւր մի հայի համար ուր կուզի նա լինի, որ ամեն մի հայ հեղինակ, հրատարակիչ, թարգմանիչ ուրախութեամբ իր հրատարակութիւններից մի կամ երկու օրինակ կնուիրի այնտեղ հաստատուելիք ազգային մատենագարանին, միայն թէ նա համոզուած լինի, ուղարկած գրքերը ինչպէս հարկն է կրպահպանուն և ցանկացած նպատակին կրճառայեն: Երկրորդ, հրատարակողների համար ամենամեծ յարմարութիւն է այն հանգամանքը, որ Մայր Աթոռը ունի իր սեպհական պարբերական օրգանը հայ հրա-

տարակութեանց մէջ ամենից շատ տարածուածը. — ամենայնու
ընկած անկիւններ, թէև մասամբ արհեստական եղանակաւ,
մուտք գործողը: Իւրաքանչիւր նոր ստացած գրական աշխա-
տութեան մասին անհրաժեշտապէս այդ թերթի՝ «Արարատի» մէջ
մատենագրական (Bibliographia) տեղեկութիւններ կը տրուին: Ո-
րով մեծապէս նպաստուած կըլինի գրքի տարածման: Մինչև այ-
ժըմ ստացուած գրքերի մասին իրաւ է հաղուագիւտ գէպքե-
րում են մի որ և է տեղեկութիւն գտել բարեմիտ նուիրատուներ-
ըր, ուստի հասկանալի պատճառով սառել է նրանց սէրը, տեղի
տալով մի տեսակ անտարբերութեան. բայց թող իւրաքանչիւրը
համոզուած լինի, որ այսուհետև այլ այդպէս չի լինիլ, որ նրա
ուղարկած նուէրը առանց շնորհակալութեան, արժանի գնահա-
տութեան և յիշատակութեան չեն մնալ: Թող նոքա մտածեն,
որ Եւրոպայում նոյն իսկ հռչակաւոր գիտնականները, յայտնի
գրողները, բացի այն, որ ամիսներով և երբեմն տարիներով ա-
ռաջ բազմաթիւ թերթերում անընդհատ յայտարարութիւններ,
րեկլամներ են տալիս հասարակութեան իրանց լոյս տեսնելի աշ-
խատութեան մասին, հրատարակելուց յետոյ, երբեմն քսանից —
յիսուն օրինակներ ձրիապէս այս կամ այն խմբագրութեան, այս
կամ այն մասնաւոր մասնագէտ անձին են ուղարկում որպէս զի
խօսեն իրանց աշխատութեան մասին, ցոյց տան նրա լաւ ու
վատ կողմերը որով հեղինակը թէ նիւթապէս է օգուտ ստա-
նում և թէ բարոյապէս:

Մենք յոյս ունինք հայ հեղինակին նուիրատուութեան գրգի-
չը ոչ թէ երկրորդ, այլ առաջին հայեցակէտը կըլինի: Եթէ այժ-
մուանից սկսած ստացուին բոլոր նոր հրատարակութիւնները, մի-
ջոցներ ձեռք կառնուէր լրիւ ժողովել թէ հին հրատարակու-
թիւնները և թէ օտար լեզուներով լոյս տեսածները:

Պ. Յ. Բարխուդարեանը առաջինն է, որ Միաբանի հրաւերից
յետոյ իր հրատարակութիւնը «Արարատի» խմբագրութեան ու-
ղարկելով առիթ է տալիս նորից արծարծել իւրաքանչիւր մտա-
ծող հայի սրտին այնքան մօտիկ խնդիրը, որի նորից յարուցա-
նելը ոչ թէ պէտք է ծաղրի նիւթ տար ինչպէս գծախտաբար

եղաւ, որովհետեւ Միաբանն էր նրա կրկնողը, այլ բոլորի կողմից լուրջ ուշադրութեան առնուէր և աշխատուէր հասարակութիւնը ոգևորել: Մինչև օրս շատ օգտակար խնդիրներ են սրա նրա մտքումը ծագել, շատերը մի առժամակ լրագրութեան նիւթ են տուել, բայց նրանցից միայն քչերն են իրագործուել: Երանի այս էլ մոռացուածների կարգը չանցնի և մեր ձայնը բազմաթիւ արձագանքներ գտնի:

«Մանկավարժական գրադարանը» հրատարակւում է տարին երկու անգամ: Բաժանորդագինն է 2 ռ.: ցանկացողները գիմում են հետևեալ հասցէով. Тифлисъ. Набережная. Домъ № 11. Հրատարակողը համեստութեամբ խոյս է տուել իր անունը գրելուց, բայց հարկաւոր էր օտարերկրացի հայերի համար ևս հասցէ տալ կամ փրանսերէն կամ գերմաներէն լեզուով:

Հանգիսի վերնագիրը իւրաքանչիւրին առանց երկար բացատրութեան հասկանալի է կացուցանում նրա նպատակը: Սկսած այն օրից, երբ շնորհիւ գերմանական կրթութեան Ռուսահայաստանում հին խալիփայական ողորմելի կրթարանների տեղ, բազմացաւ մեր կանոնաւոր ուսումնարանների թիւը միշտ օրէցօր աւելի զօրեղ կերպով աճող կարիք է զգացուել ունենալ կանոնաւոր խմբագրուած պարբերական այնպիսի հրատարակութիւնների, որտեղ հիմնաւորապէս մշակուելով զուտ մանկավարժական խնդիրներ, նպաստուէր մեր նորաբողբոյ, անցեալ փորձառութիւնից և աւանդութիւնից (Tradition) զուրկ ուսումնարանական գործին:

Մենք ամեն բան օտարից էինք փոխ առել արդարացի կեբսով համոզուած լինելով նրա գերազանցութեան, նրա օգտակարութեան մէջ, տակայն օտար ընդօրինակութիւնը իր ամբողջութեամբ իր հիմունքներով շատ շատերին անհասկանալի, անիրագործելի մնաց: Ուստի անհրաժեշտ էր մութ կէտերի պարզաբանումն և մեր սեփական կեանքի պայմաններից դիտած փորձերի քննութիւն, համեմատութիւն: Ս. Էջմիածնի ամենագործունեայ միաբաններից դուրս եկան առաջին անգամ անձինք, որ ցանկացան այդ անհրաժեշտ կարիքին բաւարարութիւն տալ:

Հայր Վահան վարդապետ Բաստամեանը դեռ 1875 թ. հրատա-

րակեց «Գլորոց» մանկավարժական ամսագիրը՝ ապա խորէն ծ. վարդապետ Ստեփանէն՝ «Մանկավարժական թերթը»։ Սակայն դժբախտաբար երկուսն էլ կարճ կեանք ունեցան։ Նիկողայոս Խոսրովեանի «Վարժարանը» ևս թէև շնորհիւ այն հանգամանքին, որ իր շուրջն էր հաւաքել մեր միջում անուն ունեցող գործիչներին, նիւթական ապահովութիւն չունենալով նոյնպէս գաղարման ենթարկուեց։ Հայերը սովորել են և սիրում են կարգալի բայց դժբախտաբար աւելորդ ծախս են համարում այդ նպատակին տուածը։

«Մանկավարժական գրադարան»-ի հրատարակիչը իբրև հմուտ մանկավարժ լաւ ըմբռնելով մեր կարիքը ձեռնարկել է իր գործը բաւականի համեստ ծրագրով. անցեալի փորձը նրա համար դաս է։ Առաջին գրքի բովանդակութիւնը մեծաւ մասամբ կամ թարգմանութիւն է, կամ փոփոխութիւն. մեր ուսումնարանական կեանքից վերցրած յօդուածներ դեռ չկան և պէտք է յուսալ, որ ապագայում այդ պակասը կրլրացնուի։ Ընդհանուր առմամբ բոլոր յօդուածները կարգացւում են խիստ հետաքրքրութեամբ. և այն հանգամանքը, որ մեր երիտասարդ մանկավարժին յաջողուել է իբրև աշխատակիցներ իր շուրջը համախմբել մեր նորաւարտ մանկավարժներին, բաւականի գրաւական է նրա հրատարակութեան յաջողութեան, միայն եթէ պ. Բարխուդարեանը ժամանակի ընթացքում հետևող լինի այն անձանց, որոնք իրանց «ես»-ի անսխալականութեան դէմ ոչ մի հակառակութիւն չեն ընդունել և որի հետևանքը եղել է պարբերական հրատարակութեանց մի մի անձանց ձեռք անցնելը և դժբաղդաբար շատ դէպքերում ծառայում են նրանց սեփական քմահաճոյքներին, կրքերին հետևապէս աւելի վնասակար են հանդիսանում հասարակական շահերին. իսկ այդ ընթացքը դժուար կրլինէր, եթէ լսուէր ծանրակշիռ հարցերում մի քանի անձանց կարծիքները։ Հանդիսի մէջ առանձին հետաքրքրութեամբ կարգացւում են մանաւանդ «Պարիզի միջնակարգ գլորոցները» (էջ 4) և «Ննայի ճեմարանական մանկավարժական Սեմինարիոնը և նորա կազմակերպութիւնը»։ Այս երկու յօդուածներում բաւականի կենդանի և

իրականութեան բոլորովին համապատասխանող կերպով նկարագրուած են փրանսիացոց և Գերմանացոց՝ երկու ամենաքաղաքակիրթ ազգերի օրինական հաստատութիւնները: Ուշագրութեան արժանի են պ. Յ. Տէր-Միրաքեանի և Ի. Յարութիւնեանի մեր ուսում նարանական գործին խիստ հետաքրքիր կէտեր շոշափող յօդուածները: «Այովիասեան մանկավարժների արդի դերը իրանց տաճկահայտակ ազգայինների կրթական գործում և «Համառօտ ծրագիր Ներսիսեան Հոգեւոր ուսումնարանի գիշերօթիկ սաների դպրոցական ճանապարհորդութեան»:

Քանի որ «Մանկ. գրագ.» նոր հրատարակութիւն է, արժէր մի քանի խօսք ևս նրա արտաքին տեսքի մասին ասել: Առհասարակ խիստ ցանկալի էր, որ իւրաքանչիւր հեղինակ կամ հրատարակիչ ամեն կարելի միջոցները գործ դնէր լոյս ընծայած գիրքը լաւ թղթի վրայ լինէր, թանաքը դժգոյն չլինէր, խոյս տար նօտրագրերի գործածութիւնից և վերջապէս գրքի ձեւը սիրուն, մատենադարանում տեղաւորելու գեղեցկութիւն ունենար: Այս կէտերը արժանի են ուշագրութեան թէ ճաշակի և թէ առողջապահական տեսակէտից: Եթէ այս սլայմանները ի նկատի առնուէին, մենք մեր առաջ չէինք ունենալ «Հրատ. ընկերութեան» հրատարակած գրքերի տգեղ, իրարից տարբերող՝ թէ մեծութեամբ թէ տիպով և թէ թղթով գրքերը: Ցանկալի էր, որ «Հրատ. ընկ.» յարգելի անգամները իրանց հրատարակութեանց մէջ միատեսակութիւն պահպանէին, որով նրանք մեր մատենադարաններում առանձին զարդարանք կլինէին: Պ. Բարխուդարեանի գիրքը ընդհանրապէս լաւ է, միայն թուղթը երեւի տեղափոխութեան դիւրութեան պատճառաւ շատ է բարակ:

Ի վերջոյ շնորհաւորում ենք մեր գրականութեան ասպարիզում լոյս տեսնող նոր պարբերական հրատարակութիւնը և ի սրտէ ցանկանում ենք նրան յաջողութիւն: